«Gamechangers: Earth Mode» 5 ամսյա կրթական ԱՆՎՃԱՐ ծրագիրն իրականացվում է ՅՈՒՆԻՍԵՖ-ի, «Game Changers Coalition»-ի, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի (ՁԻՀ) կողմից՝ ՁԻՀ-ի Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների, Սյունքում՝ «Sisian Co-creation lab»-ի ու «Agarak Co-creation lab»-ի հետ համագործակցությամբ, և ֆինանսավորվում է «Ավստրիայի Զարգացման Գործակալության» (ADA) կողմից՝ «Ավստրիայի Զարգացման Համագործակցության» միջոցներով:

Ծրագիրը նախատեսված է Հայաստանում՝ հատկապես Գեղարքունիքի, Շիրակի, Լոռու, Սյունիքի, Կոտայքի, Արմավիրի, Արարատի մարզերում բնակվող 12-24 տարեկան երիտասարդների համար, սակայն այն չի բացառում նաև այլ մարզերի և բնակավայրերի համապատասխան տարիքային խմբի երիտասարդների մասնակցությունը: «Gamechangers: Earth Mode» ծրագրի նպատակն է ժամանակակից տեխնոլոգիական ոլորտում համահավասար կրթական հնարավորություններ ապահովել մարզաբնակ երիտասարդների համար՝ նպաստելով տեխնելոգիական առաջադեմ ոլորտներում նրանց մասնագիտական կողմնորոշմանը:

Ծրագիրը ներառում է երկու զուգահեռ ուսուցման խումբ՝ խաղերի ստեղծում և մուլտիմեդիա տեխնոլոգիաներ, վերջինս ենթադրում է անիմացիոն հոլովակների, 2D/3D կերպարների և վիդեոբովանդակության (վլոգերի կամ կարճ հոլովակների) ստեղծում: Դասերն անցկացվելու են հիբրիդային ձևաչափով (Շիրակի, Լոռու և Սյունիքի մարզերում բնակվող երիտասարդների համար՝ լսարանային, այլ մարզերից մասնակցող երիտասարդների համար՝ առցանց) և դպրոցական հիմնական դասաժամերից հետո՝ առանց խոչընդոտելու դպրոցական դասապրոցեսին:

Մասնակցելու համար հարկավոր է մինչև սեպտեմբերի 22-ը գրանցվել՝ լրացնելով հետևյալ առցանց հայտաձևը **https://forms.gle/11Eek6wpDADmf3wV8** :